ԿԱՐԾԻՔ

ԷԼԼԱ ԱԶԱՏԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ «ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՔՐՈՆՈՏՈՊԸ ԴՈՆ ԴԵԼԻԼՈՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Էլլա Ազատի Ասատրյանի թեկնածուական ատենախոսության թեման է «Պոստմոդեռնիստական քրոնոտոպը Դոն ԴեԼիլոյի ստեղծագործության մեջ»: Ատենախոսության գլխավոր հիմնահարցը՝ պոստմոդեռնիստական քրոնոտոպի առանձնահատկությունների վերհանումն է տվյալ հեղինակի մի քանի ստեղծագործություններում՝ ժամանակ և տարածություն հասկացությունների՝ մեկը մյուսի նկատմամբ գերակա լինելու փաստի շեշտադրմամբ:

Ըստ ատենախոսի՝ Դոն ԴեԼիլոյի ստեղծագործությունը գրեթե ուսումնասիրված չէ հայաստանյան գրականագիտության շրջանակում, բայց հաշվի առնելով՝ հեղինակի վեպերում արծարծված խնդիրների և թեմաների արդիականությունը, հեղինակի ստեղծագործության ուսումնասիրությունը կարևոր գիտական արժեք է ներկայացնում:

Միանգամայն հիմնավորված և կուռ տրամաբանության վրա է հիմնված ատենախոսության կառուցվածքը, ինչը հնարավորություն է ընձեռում հեղինակին համակողմանի հետազոտելու իր իսկ կողմից առաջ քաշված հիմնախնդիրները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից, որը պարունակում է 101 աղբյուր, և հավելվածից:

Ներածության մեջ ատենախոսը հիմնավորում է թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, ներկայացնում հետազոտման մեթոդները, ձևակերպում ատենախոսության նպատակներն ու խնդիրները:

Ատենախոսության առաջին «Տարածությունը՝ որպես քրոնոտոպի կառուցման գերակա միավոր Դոն ԴեԼիլոյի ստեղծագործություններում» («Սպիտակ աղմուկ», «Մաո Երկրորդ», «Զրո K») գլուխը, նվիրված է այն գեղարվեստական միջոցների ու առանցքային թեմաների վերհանմանը, որոնց օգնությամբ հեղինակի վեպերում կառուցվում է տարածությունը: Այս գլխում հանգամանորեն ներկայացված է, թե ինչպես և ինչ միջոցների ազդեցությամբ են տարածությունն ու ժամանակը հանդես գալիս որպես առանձին միավորներ. այստեղ ատենախոսն առաջ է քաշում այն թեզը, որ ԴեԼիլոյի վեպերում պոստմոդեռնիստական քրոնոտոպը ենթադրում է կամ ժամանակի, կամ տարածության գերակայությունը մյուս բաղադրիչի նկատմամբ:

Ուսումնասիրված վեպերի շրջանակում՝ տարածությունը՝ որպես քրոնոտոպի գերակա միավոր, դիտարկելիս ատենախոսն անդրադառնում է զանգվածային լրատվական միջոցներին, հեռուստատեսությանը և հիպերմարկետին, ինչպես նաև առանձնատան, բեյսբոլի մարզադաշտի, քաղաքի (Նյու Յորք, Լոնդոն, Աթենք, Բեյրութ), քաղաքակրթությունների (արևելք-արևմուտք) տարածական միավորներին և քաղաքային տարածությունից դուրս տեղակայված լաբորատորիայի տոպոսին: Ըստ այդմ՝ պոստմոդեռնիստական քրոնոտոպը տվյալ վեպերում կառուցվում է վերը նշված թեմաներով:

Հատուկ ուզում ենք շեշտադրել, որ այս գլխում ատենախոսն առաջարկում է օգտագործել իր կողմից առաջարկած մեդիատարածություն եզրը՝ խորհրդանշելով այն տարածությունը, որը ստեղծվում է հեռուստատեսության և ԶԼՄ-ի ազդեցությամբ, վերջիններս գալիս են փոխարինելու իրական տարածությանը, ինչից բխում է, որ ատենախոսն անդրադարձել է նաև սիմուլյակրին՝ այն նույնպես դիտարկելով՝ որպես քրոնոտոպակերտ միջոց: Տարածության բաղադրիչով պայմանավորված՝ վիպական ժամանակի քննության համատեքստում ուսումնասիրվել են նաև մահվան և անմահության թեմաները:

Գիտական աշխատանքի երկրորդ՝ «Ժամանակը՝ որպես քրոնոտոպի կառուցման գերակա միավոր Դոն ԴեԼիլոյի ստեղծագործություններում («Ընկնող

մարդը», «Կոսմոպոլիս», «Օմեգա կետը»), գլուխը նվիրված է վիպական ժամանակի կատեգորիայի գերակայության ուսումնասիրությանը, ինչպես նաև ժամանակի և տարածության փոխադարձ կապի բացահայմանը Դոն ԴեԼիլոյի նշված վեպերում: Այս գլխում էլ, ի տարբերություն ատենախոսության առաջին գլխի, ներկայացված է ժամանակի գերակա միավոր լինելը տարածության նկատմամբ, ինչպես նաև այն թեմաներն ու միջոցները, որոնք ձևավորում են քրոնոտոպը:

Այստեղ շեշադրված են ահաբեկչության և արվեստի թեմաները, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիաներով գերհագեցած ավտոմեքենայի և ճանապարհի տոպոսները: Տվյալ գլխում քննվում է նաև, թե ինչպես է ժամանակը ձևավորում վիպական տարածությունը, և ինչպես են վիպական քրոնոտոպում արտացոլվում հասարակական տարբեր երևույթները: Որպես քրոնոտոպակերտ միջոցներ հանդես են գալիս արվեստն ու ահաբեկչությունը: Տվյալ գլխում նույնպես ատենախոսն առաջ է քաշում իր կողմից առաջարկած մեկ այլ եզր. այն է անցյալացած ներկան՝ խորհրդանշելով, որ ներկան՝ որպես ինքնուրույն ժամանակային միավոր, կարծես դադարում է գոյություն ունենալ՝ լիովին վերածվելով անցյալի: Ատենախոսը նաև դիտարկում է ժամանակի երկարաձգման ֆենոմենը, որը պայմանավորված է տարածության առանձնահատկություններով:

Եզրակացություններում ամփոփվում են հետազոտության արդյունքները:

Հրատարակված հոդվածները հիմնականում ընդգրկում են աշխատանքի արդյունքները, սեղմագրի բովանդակությունը ևս արտացոլում է ատենախոսության դրույթները:

Նյութի նմանօրինակ ընդգրկմամբ և առաջադրված հիմնահարցերի բազմաձևությամբ, որոնց ատենախոսը կարողացել է համոզիչ լուծումներ տալ իր գիտական աշխատության մեջ, այնուամենայնիվ, աշխատանքում տեղ են գտել որոշ բացթողումներ.

Երբեմն ատենախոսության հեղինակը չափից ավելի է տարվում սյուժեի նկարագրությամբ, վերլուծելուն զուգահեռ վերապատմելով ստեղծագործությունը:

Նաև առկա են չափից ավելի շատ մեջբերումներ ստեղծագործություններից և գիտական աղբյուրներից, որոնք երբեմն գրավում են էջի գերակշիռ մասը:

Հարկ էր, հատկապես աշխատանքի ներածական մասում, ավելի մանրամասն անդրադառնալ պոստմոդեռնիզմի և նաև մոդեռնիզմի (ԴեԼիլոն իրեն հենց մոդեռնիստ էր համարում) մշակույթին ու գեղագիտությանը: ԴեԼիլոյի ստեղծագործական մեթոդը համեմատել այլ ամերիկացի գրողների մեթոդների հետ, հատկապես որ ատենախոսության ներածության մեջ հեղինակը որպես իր աշխատանքի տեսամեթոդաբանական հիմք նշում է մեթոդաբանական սկզբունքների համալիր կիրառումը, այդ թվում՝ համադրման վերլուծական մեթոդը:

Այնուամենայնիվ, վերոգրյալ բացթողումներն ու թերությունները չեն նսեմացնում հետազոտության գիտական արժեքը: «Պոստմոդեռնիստական քրոնոտոպը Դոն ԴեԼիլոյի ստեղծագործության մեջ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը իրենից ներկայացնում է բավական ինքնուրույն հետազոտություն և համապատասխանում է նմանատիպ աշխատություններին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Էլլա Ազատի Ասատրյանն, արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի կոչմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

բ.գ.թ. դոցենտ Վահե Արսենյան

բ.գ.թ., դոցենտ Վահե Արսենյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար

բ. գ. թ. Մ. Հովհաննիսյան

26.06.2022